


2255

Ն. Ա. ԻՎԱՆՅՈՒԿ

ՀԱՏԻԿ ԶԱՐԱՅՆԵԼՆ ՈՒ
ՀԱՏԻԿԱՆՈՑ
ՊԱՏՐՈՈՍԵԼԸ



ՊԵՏՎԱՏ
ԵՎՐԵԱՆ 1933

08 AUG 2010


633.1
h-85

Ն. Ա. ԽՎԱճառիկ

895 895 85

ՀԱՇԿ ԶՈՐԱՑՆԵԼՆ ՈՒ
ՀԱՇԿԱՆՈՑ ՊԱՏՐԱՍՏԵԼԸ

18668
186681



ՊԵՏԱՐԱՏ
ՅԵՐԵՎԱՆ 1933

18688

29 APR 2013

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Զքավորամիջակալին մանր-մունք տնտեսություններն իրենց նեղիկ (զոլակ) արտերը միացնում, թումբում միջնակները վերացնում—դարձնում են լայնատարած դաշտեր։ Այնտեղ, ուր առաջ չեր կարելի յերկողանի փոցի զցել, վորովհետև կարող եր հարեւանի արտը տակն առնել, այժմ, շնորհիվ հողոգտագործման կոլեկտիվ ձեր անցնելուն, ամենակատարելագործված գործիքները մատչելի յեն դարձել։ Կոլտնտեսական դաշտերում բանում են վոչ միայն տրակտորի գութանշեր, ցանող մեքենաներ, այլև կոմբայններ։

Գյուղական անհատական արտերի չնչին՝ կիսատպուտ բերքը պատմության գիրկն և անցնում։ Հնգամակի վերջում բերքատվությունը 35 % բարձրացնելու առթիվ, կուսակցության և կառավարության կայացրած վորոշումը վոչ միայն կկատարվի, այլև կզերակատարվի։

Կոլեկտիվ և խորհրդային խոշոր տնտեսությունները վերացնում են նաև (ամբարներում) ու հորերում, իսկ յերբեմն ել տան թախտի տակ հատիկ պահելու պատճենական ձեերը, վոր տեղի ունեցին մենատնտեսության մեջ։ Միաժամանակ վերացվում են նաև թոնորով կամ թաղաքներում հատիկ չորացնելու նախնական ձեերը։

Լենինգրադի մարզի պայմաններում հացի բերքը



37960-62

հավաքելու համար բարենպաստ ժամանակ շատ քիչ ե
պատճեռում: Մեծ մասամբ ամառվա վերջերին ու աշ-
նանն անձրեներ են գալիս, և հացն այնքան խոնավ ե
լինում, վոր կալից նոր դուրս յեկած հատիկը $18-20^{\circ}$ ։
Չուր ե պարունակում, իսկ տեղումներ շատ յեղած տա-
րիները խոնավությունը մինչև 30° ի յե հասնում:

Պարզ բան ե, վոր այսպիսի հաց պահելը համարյա
անհնարին ե, քանի վոր հատիկը շուտ փշանում ե,
մանավանդ աշնանն ու գարնանը, յերբ դուրսը յեղա-
նակը տաք ելինում, Սակայն կանոնավոր չպահելու
դեպքում նույնիսկ լավ չորացրած հատիկն ել կարելի
յե փշացնել: Այս իսկ պատճառով՝ ամեն մի կորոնտե-
սություն ու խորհանտեսություն վոչ միայն պիտի կա-
րողանա հացը լավ բուսցնել ու հացնել այս պահե-
լու համար պատրաստ անել ու լավ պահել: Այս աշ-
խատության նպատակն ել հենց այն ե, վոր ցույց
տա բերքը չորացնելու և պահելու այն ձևերը, վորոնց
խմանախ անհրաժեշտ ե խորհանտեսության և կոլ-
տնտեսության ամեն մի անդամի:

Հատիկային տնտեսության սոցիալիստական սեկ-
տորի զարգացումն առաջ ե անցնում կատարելագործ-
ված չորանոցներ ու շտեմարաններ կառուցելու տեմ-
պիրից: Այս իսկ պատճառով՝ իբրև ծալրահեղ միջոց,
խորհանտեսություններն ու կորտնատեսություններն
ստիպված են լինում հատիկը պահել նաև լավ չպատ-
րաստված շենքերում և չորացնելու համար ողտադոր-
ծել յեղած բոլոր հարմարությունները: Բայց այս մի-
ջոցներին իսկապես պիտք ե նայենք վորպես ծալրա-
հեղ միջոցի, վորպես անխուսափելի չարիքի — վորպես
մեռնող մենատնտեսությունից սոցիալիստական պյու-
ղատնտեսությանը մնացած ժառանդության:

ԽՈՆԱՎ ՀԱՑԻԿՆ ԻՆՉՈՒԻ ԼԱՎ ԶԻ ՊԱՀՎՈՒՄ

Նորմալ պայմաններում հացահատիկը $12-14^{\circ}$
ջուր պիտք ե պարունակի: Հացահատիկի խոնավու-
թյան բարձր չափը, վոր հողագործության ժողովրդա-
կան կոմիսարիատն ե թուրլ տալիս, 16° -ից չպիտք
ե անցնի, իսկ լուղատու հացահատիկներինը — վուշ, կա-
նեփ՝ 13° -ից: Տաքությունը վորքան ցած լինի,
խոնավությունն այնքան շատ կարող ե լինել և, ընդ-
հակառակ՝ տաքությունը բարձր լեզած ժամանակ
հատիկի խոնավությունը ցած պիտք ե լինի, թե չե-
քավ չի պահի: Տարբեր աստիճաննի տաքության ժա-
մանակ ցորնի մեջ նորմալ խոնավություն պահպա-
նելու աստիճանը ցույց ե տալիս ստորև բերված տախ-
տակը:

Ողի ջերմաստի- ճանը ցելսիուսով	Ջրի 0° -ը ցորնի մեջ	Ողի ջերմաս- տիճանը ցելս.	Ջրի 0° -ը ցորնի մեջ
-20	20	30	11
-15	19	40	10
-10	18	50	9
-5	17	60	8
0	16	70	7
5	15	80	5
10	14	90	3
15	13	100	0
20	12		

Հացահատիկներն ողից ջուր ծծելու ընդունակությունը ունեն Այս պատճառով եւ, նայած ողի ջերմաստիճանին, խոնավության պահպանումը նրանց մեջ տատանվում է: Խոնավությունը համեմատաբար հեշտությամբ ծծելով՝ հատիկներն այն լավ են պահում ու դժվարությամբ են դուրս տալիս: Արհեստական կերպով թրջելու գեղքում հացազգիների հատիկները կարող են նաև մինչև 85° խոնավություն ծծել, իսկ որպազիներինը՝ 300° ավելի, քան իրենց քաշն եւ 40° խոնավություն ունենալու գեղքում հատիկը բոլորովին փափկում է:

Խոնավությունը վորքան բարձր լինի, հատիկն այնքան դժվար կպահվի: Իսկ պատճառոն ինչ եւ: Յեթե հատիկը հասցված է ողալին չորության վիճակի, այսինքն՝ $10-12^{\circ}$ խոնավություն ունի, կյանքը նրա մեջ համարյա մեռնում է, Ծնչառությունը բոլորովին դանդաղ է կատարվում: Բոլորովին այն չենք նկատում խոնավ հատիկի մեջ տաքությունը բարձրացած գեղքում: Ամեն մի կոլտնտեսական գիտի, վոր հողը վորքան խոնավ ու լեղանակը վորքան տաք և լինում, ցանած սերմն այնքան շուտ և բունում: Հատիկը, ինչպես ամեն մի կենդանի ելակ, շնչում և և շնչելու ժամանակ թթվածին և հավաքում ու ածխածին արտաշնչում: Խոնավությունն ու տաքությունը վորքան բարձր են լինում, հատիկի շնչառությունն այնքան ուժեղ և լինում:

Իսկ յեթե տուն տանելու ժամանակ հատիկը լավ չորացրած չի լինում, կամ հետո խոնավություն է ծծում, սկսում է կենդանանալ, ու շնչառությունն արգագանում է: Տաքությունն ու խոնավությունը բարձ-

բանալու հետ, հատիկի շնչառությունն ել և արագանում: Տաքությունը $15-17^{\circ}$ ից մինչև 30° բարձրանալու հետ, ածխածնի արտաշնչումը 20 անգամ ավելանում է:

Ծնչառության ուժեղանալու հետևանքով ատքությունը բարձրանում է, և զանազան բակտերիաների ու բորբոսանկերի զարգացման համար բարենպաստ պայմաններ են ստեղծվում: Յեթե հատիկը բոլորովին անխնամ մնա, տաքությունը կարող է հասնել մինչև $8-10^{\circ}$, նույնիսկ ավելի, և սաղմը վհացնել: Ծնչառությունն ուժեղանալու արդյունքը մնում է այն, զոր հատիկի յերեսին, մանավանդ լավ չողտափոխելու ղեղպակում, ածխաթթու շատ և նստում, և հատիկները զըրկվում են նորմալ կերպով շնչելու, այսինքն՝ թթվածին հավաքելու հնարավորությունից, վոր և պատճառ և դառնում սաղմը վհանալուն:

Հատիկի փշանալուն նպաստում են նաև զանազան տեսակի բորբոսանկերը: Մրանք սկզբում միայն հատիկի յերեսին են բուն դնում, իսկ յերբ հատիկը թուլանում ու կեղեց փափկում է, ավելի խորն են մըտնում և բոլորովին մեղցնում այն: Այդ բորբոսանկերի յերեան գալու նշանն իրենց նեխանուն եւ Հատիկն առանձնապես շուտ և փշանում այն ղեղքում, յերբ շերտը հաստ և լինում և ժամանակին չի ողափոխում:

Այսպիսով, հատիկի խոնավության կամ թացության արգանքը լինում է այն, վոր բաղադրությունը հետզհետե փոփոխվում և այն տեղն է հասնում, վոր փտելուց կամ ծիլ տալուց փշանում է: Իսկ չոր հատիկը կարող է լավ պահվել ու չփշանալ: Հատիկի չորու-

Քլուն իր լավորակության գլխավոր նշանն եւ Ահա
թե ինչու բոլոր միջոցները ձեռք պետք եւ առնվեն,
վորպեսզի հատիկն ողակին չորության վիճակի հասց-
վի:

ԻՆՉՊԵՍ ՎՈՐՈՇԵԼ ՀԱՏԻԿԻ ԽՈՆԱՎՈՒԹՅՈՒՆԸ

Հատիկի խոնավությունն առանձին գործիքների
միջոցով ձիշտ վորոշվում եւ լարորատորիաներում կամ
սերմ ստուգող կայաններում: Կոլտնահսության կամ
խորհանտեսության աշխատավորը գործնական կյան-
քում պետք եւ կարողանա խոնավությունն իսկույն վո-
րոշել, թեկուզ վոչ այնքան ել ձիշտ, բայց այնքան,
վեր հատիկի փչանալու առաջն առնելու համար կա-
րողանա այս կամ այն միջոցը ձեռք առնել:

Բերենք խոնավությունը վորոշելու մի քանի միջոց:
Զանազանվում են չոր, միջակ չոր, խոնավ և թաց
հատիկները: Խոնավ հատիկը թացից տարբերվում եւ
նարանով, վոր փայլն ու սրսությունը կորցնում եւ
գույնը գցում եւ թաց հատիկն ավելի լիքը, զբսից
ավելի կոկ ու հավասար ել լինում, քան չորը: Չոր
հատիկը բուռն առնելիս մատների արանքից հեղառու-
թյամբ թափվում եւ, իսկ խոնավն ու թացը բուռն մեջ
գույնը մնում են: Չոր հատիկի մեջ պտղուցն ու ձեռքն
ավելի հեշտ են մտնում, քան թացի մեջ: Չոր հատի-
կի մեջ ձեռքը խոթելիս սառնություն եւ զգացվում,
իսկ խոնավի ու թացի մեջ՝ տաքություն և խոնավու-
թյուն: Բուռն մեջ սեղմած հատիկի, մանավանդ գարու-
և վարսակի, պոչերը ծակում են: Խոնավ և թաց հա-
տիկի շեղջի մեջ ձեռքը խոթելիս, հատիկները կը բա-
շում են ձեռքին: Խոնավությունը վորքան շատ լինի,

հատիկներն այնքան շուտ են կպչում ձեռքին: Հա-
տիկները հաշվելիս պետք եւ պահել ձեռքի յերեսին,
վոր քրանելու կողմից ավելի աղատ եւ թիակով խառ-
նելիս կամ մի ուրիշ տեղ լցնելիս չոր գարու և վար-
սակի հատիկները պարզ ու զնդուն խշում են, իսկ
թացինը թրպպալով ընկնում են: Մի վորեկ հատիկ
վորեկ պիտի մարմնի վրա զանակով կտրելիս, զանակի
ուժից կոտրվում եւ, ու կտորատանքը շիկալով թոշում
են այս ու այն կողմը, իսկ խոնավի կտորտանքը չեն
թոշում: Հատիկի խոնավությունը վորոշվում եւ նաև
զնդասեղով ծակելիս: Հատիկը վորքան խոնավ լինի,
այնքան հեշտ եւ ծակվում, իսկ վորքան չոր, զնդասեղն
այնքան դժվար եւ մտնում: Ատամի տակ զցելիս չոր
հատիկը ջարդվում եւ, իսկ թացը միայն ճեղքվում ու
տափակում եւ:

Բայց վերոհիշյալ բոլոր միջոցները, վորոնք գործ-
նական կյանքում կիրառվում են, խոնավությունը մի-
միայն մոտավորապես վորոշելու համար են: Լավ հմուտ
լինելու դեպքում միայն կարելի յե այս միջոցներով
խոնավությունը մոտավորապես ձիշտ վորոշել: Խոնա-
վությունը հետեւյալ կերպ կարելի յե ավելի ձիշտ վո-
րոշել: Վերցնում են 100 զրամ հատիկ և մանրացնում
ու չորացնում, մինչև վոր 8, 110° տաքության ժամա-
նակ սովորական քաշը տեղը գա:

Չորացումը պետք եւ կատարել հատուկ չորացնոց-
պահարանի մեջ, իսկ չեղած դեպքում՝ կարելի յե վա-
ռարանի վրա կամ մեջը, միայն թե շատ զդուշ պետք
ել լինել, վոր հատիկը չբովվի: Յեթե չորացնելուց հե-
տո հատիկը հիշյալ 100 զրամի փոխարեն 83 զրամ
քաշեց, ուրեմն՝ 17 զրամ պակասել եւ կամ 17% չուր
ել յեղել մեջը:

Թուատատանի հյուսիսակին խոնավ շըջաններում
խոնավ հատիկը չորացնում են սովորաբար հատուկ
չօրանոցներում:

Ավելի լավ և խոնավության ճշտությունը լաբո-
մատորիայում վորոշել:

Յեթե վորոշելիս պարզվի, վոր հատիկի միջի խո-
նավությունը գերակշռում ե նորմալ տևկուը, ուրեմն
պետք ե չորացնել և խոնավությունը հասցնել մինչև
 $13 - 14^0$ ի: Այս դեպքում բերքը չորացնելիս միան-
գամից հարց ե ծագում, թե մինչև ինչ աստիճան
պետք ե չորացնել ինչպես հատիկը, այնպես և շրջա-
պատի ողը, և չորացնելու համար վհրքան ժամանակ
ե պետք, վոր հատիկը չկորցնի իր արժեքավոր հատ-
կությունը:

Կարող ե թվաը թե տաքությունը վորքան շատ
բարձրացնենք, հատիկն այնքան շուտ կարող ենք չո-
րացնել: Բայց սերմացու հացահատիկի նկատմամբ այդ-
պես անել չի կարելի: Բաղաթիքի վորձերից պարզվել
ե, վոր հատիկը ծլունակությունը բոլորավին կորցնում
ե, յերբ չոր ողի մեջ տաքացնում են մինչև Յ. 75,
խոնավ ողի մեջ մինչև Յ. 60 և ջրի մեջ մինչև 50:

Իսկ լեթեանգամ հատիկը պարենի կամ կերի համար
չորացվի և ծլունակությունը բոլորովին նկատի չաւն-
վի, գարձյալ չափաղանց շատ տաքացնել չի կարելի,
վորովհետեւ կարող ե խաշվել կամ բովվել: Բացի այդ,
տաքությունը շատ բարձրացնելիս, հատիկի լեռնոց
կեղեւ ե բռնում ու թույլ չի տալիս, վոր ջուրը միջից
դուրս գա:

Նկատի ունենալով այս հանգամանքները՝ սերմի

համար հատիկի չորացնելիս սկզբից թույլ չեն տալիս,
վոր տաքությունը Յ. 55°-ից անցնի, իսկ պարենա-
վորման և կերի համար չորացնելիս՝ Յ. 70 – 75°-ից:

Չորացնելու վրա աղդում ե նաև հատիկի շերտի
հաստությունը: Շերտը վորքան հաստ ե լինում, հա-
տիկն այնքան տվելի ուշ ե չորանում:

Այսպիս. Յ. 15-ի տաքության ժամանակ միահա-
տիկ շերտից 4 ժամում 14^0 խոնավություն կարելի
յե գոլորշեացնել, յերկհատիկ շերտից՝ 7^0 , յեռահա-
տիկ շերտից՝ 6^0 , հնգահատիկ շերտից՝ 4^0 : Ուրեմն՝
չորացումն արագացնելու համար պետք ե աշխատել,
վոր հատիկի հետ զփուղ ողի տաքացած ժակարդակը
վորքան կարելի լի մեծ լինի:

Վերքան ժամանակ ե հարկավոր հատիկ չորացնե-
լու համար: Հատիկի խոնավությունը լինում ե վոչ
միայն դրսի շերտի մեջ, այլև ներսի: Վորպեսզի հա-
տիկն ավելորդ ջուրը կորցրած լինի, վորոշ ժամանակ
ե պետք: Տաք ողի արագ գործողության ժամանակ
հատիկների միայն դրսի շերտն ե չորանում: Հատիկի
ներս լեղած ջուրը դուրս հանելու համար վորոշ ժա-
մանակ ե պահանջվում:

Բոլորովին թաց հատիկը չորացնելու համար բավա-
կանին յիրկալ ժամանակ ե պահանջվում:

Վորպեսզի հատիկի տաքությունը բարձրանա ու
միաժամանակ ծակոտիները բացվեն, հարկավոր ե
առնվազն $2 - 2\frac{1}{2}$ ժամ, նայած թե չորանոց մտնող
հատիկն ինչ աստիճան տաքություն և խոնավություն
ունի:

Վերոհիշյալից հետեւալ յեղակացությունը կարելի
յե անել, վորով պետք ե ղեկավարվել բերքը չորաց-
նելու ժամանակ.

1. Չորացնելու ժամանակ հատիկն աստիճանաբար

պետք ե տաքացնել և յերբեք թուԱլ չտալ, վոր մեկեն
չափազանց բարձր տաքության ինթարկվի.

2. զդուշ պետք ե լինել, վոր չորանոցի տաքու-
թյունը սահմանված չափեց չանցնի: Պարենի ու կերի
հատիկների համար տաքությունն ավելի բարձր կարող
ե լինել, քան սերմացուի համար.

3. չորանոցի խոնավ ողը վորքան կարելի յե շուտ
պետք ե մաքրել: Ողի կանգնած ժամանակ հատիկը
կարող ե խաշվել, մի հանգամանք, վոր վոչ միայն
չորացնելու հաջողության վրա յե աղղում, այլև սեր-
մացուի ծլունակության վրա.

4. հատիկն այն հաստությամբ պետք ե լցնել, վոր
ամեն կողմից մեջն ող խաղա.

5. չորացնելն այնքան պետք ե տեի, մինչև վոր
հատիկն ավելորդ խոնավությունը դուրս տա: Հատիկը
չորանոցում յերկար չպետք ե պահել, վորովհետև հըս-
կելու համար ավելորդ աշխատող ուժ ե վատնվում և
անտեղի ահագին վառելիք ե գնում.

6. պետք ե աշխատել, վոր ողը, չորանոցից անց-
նելիս ու ջրի գոլորշիներից հագենալիս, ավելի ու ա-
վելի խոնավ հատիկի հանդիպի: Ողի չորացնող հատ-
կությունը կախված ե ողի և հատիկի մեջ բեղած խո-
նավության հարաբերականից: Միատեսակ խոնա-
վություն ունեցող ողը հատիկի մեկը կարող ե չորաց-
նել, իսկ մուսն ողի հետ շփվելիս վոչ միայն չի չորա-
նա, այլ ընդհակառակը, ողը կչորացնի՝ վերջինից
խոնավությունը խլելով ու ինքը խոնավանալով:

7. Չորանոցից անցնող ողի ջերմությունը վորոշ-
ված չափից յերբեք չպետք ե իջնի: Ողի ու հատիկի

տաքության միջև լեղած տարրերությունն այն պետք
ե լինի, վոր ողի հավաքած ջուրը չնստի հատիկի
վրա:

ԶՈՐԱՑՆԵԼՈՒ ՑԵՂԱՆԱԿԸ

Շանոթանալով չորացնելու կարևորագույն պայ-
մաններին՝ այժմ ծանոթանանք բերքը զանազան յե-
ղանակով չորացնելու գործին: Չորացնել կարելի յե
կամ ամբողջ բերքն առանց կալսելու, կամ միմիայն
հատիկը: Առաջին ձևը գործ ե ածվում այն ժամանակ,
յերբ հացը կամով ե ծեծվում կամ թակելով: Այլապես՝
դժվար ե լինում հատիկը հանել, իսկ խոնավ տարի-
ները, յերբ հատիկի խոնավությունը 25—30 °₀-ի յե
համար է, բոլորովին անհնար ե լինում: Յերբ կալսիչ
մեքենաները լուս աշխարհ ընկան, բերքի խոնավու-
թյունը այլևս խոչնդու չի հանդիսանում կալսելու
ժամանակ: Կալսիչներով, մանավանդ մեխանիկական
շարժիչ ունեցողներով, հնարավոր ե դարձել նաև թաց
հացի կալսելը:

ԴԱՇՏՈՒՄ ԶՈՐԱՑՆԵԼՈՒ ՑԵՂԵՐԸ

Վորովհետև դաշտում չորացնելու գործը լավ կազ-
մակերպելու դեպում հատիկի խոնավության տոկոսը
զգալի չափով կարելի յե իջեցնել և այսպիսով իսկ
հնառու մնալ վառելիքի ու չորանոց դնելու ավելորդ
ծախսերից, հենց այս հարցի վրա ել կանգ առնենք:

Հնածած հացը սովորաբար խուզճ են կապում, յեթե
միայն խուրձկապ մեքենայով չի հնձվել: Իսկ յեթե
խուրձկապն ե հնձեւ ինքն ել կապում ե: Մաքուր,
մոլախոտի վոչ մի խառնուրդ չունեցող հացի հնձելն

ու խուրձ կապելը կատարվում ե միաժամանակ։ Իսկ յեթե ցանքը մոլախոտոտ ե կամ ցանված ե առվուշտի (չոնջա) հետ, վորն այնքան ե բարձրացել, վոր հնձելիս ծղոտի հետ ե գնում, ավելի լավ ե թողնել առանց կապելու, մինչև վոր խառնուրդը լավ թառամի ու ցամաքի։ Թէ չե՛ ծղոտը կարող ե փտել-փչանալ։ Պարզ բան ե, վոր լավ յեղանակին միայն կարելի յե հացն առանց կապելու թողնել։ Չորացրած հացն ավելի լավ ե առավոտյան ցողի ժամանակ կապել, վոր հատիկը չթափի։

Կապած խրձերը թողնում են դաշտում վոր չորանան ու լավ համեն։ Խոնավ ու անձրևալին յեղանակին հնձած հացը լավ չի չորանում։ Հենց այս պատճառով իլ հունձը լավ յեղանակին պետք ե անել։

Դաշտում հացը զանազան ձեռվ են չորացնում։ Մենք կծանոթանանք միայն միքանի ձեռի։

Նայած կլիմայական պարմաններին, դաշտում չորացնելու համար հացը բարդում են կամ փանջադնում։ Չորացնելու համար ավելի լավ ե բուրգ դնել։ Բուրգն ալսպես ե դրվում. մի խուրձ ցից կանգնեցնում են և այս ու այն կողմից չորս խուրձ խաչաձև միացնում ալդ խրձին։ հետո արանքների բաց տեղերը նորից չորս խուրձ են դնում ու կլոր ձև և ստանում։ Այս բուրգից հետո մի խուրձ ել վրան են դնում ու գլուխը բանում, բայց այս վերջին տաօերրորդ խուրձը դլխարկի (փափափի) ձև ունի։ Միայն պիտի զգուշ լինել, վոր տակի ինսը խրձի գլուխը լավ ծածկվի։ Դարձին, վորի հասկերը ճապաղ են, բուրգ դնելիս տակի ինսը խրձի ծալքերը ծղոտե կեմով պետք ե լավ վրա քաշել. վոր և հեշտացնում ե տասերրորդ խրձով

պլուխը բռնելու գործը։ Խնամքով դարսելու դեպքում բուրգի մեջ հացը լավ ե չորանում և նույնիսկ յերկարատե անձրևներից չի մասվում։

Յեթե խրձերի վերջավորության (կոթի) մեջ խոտ կամ տակը ցանած առվուլտից շատ ե լինում, այն դեպքում վերջավորությունները բավականին դանդաղ են չորանում։

Այսպիսի դեպքերում լավ յեղանակին ավելի ձեռնտու յե խաչփունջ (Քրեստից) դնել։ Խաչփունջ դնելիս զգուշ սիրտի լինել միայն, վոր խրձի հասկերը գետնին չառնեն։ Այս պատճառով՝ առաջին խուրձը մեջտեղից կուցնում են և ցից դնում գետինն այնպես, վոր հասկերը գետնին չառնեն։ Այս խրձի վրա չորս խուրձ խաչաձև այնպես են դնում, վոր հասկերը վերջավորություններից բարձր կանգնեն։ Խաչփնջի վրա գլխարկածն մի խուրձ են դնում ու գլուխը բռնում։ Խնամքով զարսելիս անընհաջուրը հասկերի մեջ չի մտնաւմ և հոսում ե գեպի վերջավորությունը։

Հլուսիսալին յերկրներում հաց չորացնելու հետևյալ ձեն և շատ տարածված։ Մեկը մոլուխ վորոշ հեռավորության վրա (5—10 մետր) հողի մեջ յերկուական գերան են տնկում և արանքները ձողեր (բարակ փայտ) անցկացնում ու խրձերը գլխի վրա դնում այս ձողերին։ Ձողերի տարածությունը այնպես պետք ե լինի, վոր հասկերը գետնին չնասնեն։ Խրձերի առաջին շարքի վրալից նորից ձողեր են անցկացնում ու վրան նորից խրձեր են շարում և ալին։ Շարքը հասնում ե մինչև յերեք մետրի, նույնիսկ ավելի։ Վերեկի շարքը ծղոտով ծածկում կամ բուրգովին բաց են թողնում։ Եեկող անձրել խրձերի յերեսից հեշտացնումք ցած ե

հոսում և միայն վերևի շարքի խրձերի վերջավորում թյունն ե թրջում: Քանի վոր խրձերն իրար պինդ կպած չեն լինում, քամին հեշտությամբ ե մտնում ամբողջ շարքի մեջ, և հացն անձրեից բոլորովին չի մնասվում: Կարելի յե նաև յերկու շարք շարել: Այս դեպքում կողքերից յերկուական գերան են ցցում գետինը և արանք շատ թողնում: Չողերը մեխում են կողքերի գերաններին ու խրձերը գլխիվալը շարում ձողերի արանքները և վերելից ծածկում ձղոտով կամ փալասներով: Լավ շարելիս անձրեաջուրը հասկերին բոլորովին չի հասնում և խրձերի միայն վերջավորությունն ե թրջում: Այսպիսի գեպքերում հատիկը բավականին լավ ե չորանում:

Կարելի յե գործածել չորացնելու նաև այլես կոչվող՝ Ֆինլանդական ձեզ: Հողի մեջ ցցեր են տալիս և խրձերը լայնքին շարում վրան: Բայց խրձերը քիչ թեք պետք ե լինեն—վերջավորությունը բարձր, իսկ հասկերը՝ ցածր, վոր անձրեաջուրը ցած թափվի և հասկերի վրա չմնա:

Անկախ այն բանից, թե խճերը բուրգ են դրված կամ այլ կերպ, դաշտում չորացնելու ժամանակ շատ զգուշ խնամք են պահանջում: Ամեն անգամ անձրեից կա քամուց հետո պետք ե ստուգել թե չե՞ խրձերը կարող են թափվել ու անձրեի ժամանակ թրջվել և սիջի հատ կը՝ ծլել: Յեթե լեղանակը լավ, արեալին ե, բուրգը մի որով կարելի լե բաց անել վոր շուտ չորանա:

Հացը լավ չորանալուց հետո կամ ուղղակի կրում են կալը (կալսիչի մոտ) կամ դաշտում տեղնուռնելը կամ բարդոցում, կրում են ծածկը տակ: Լավ չչորացած գեպ-

քում, բարդոցած կամ ծածկի տակ դրած հացը շատ շուտ կարող ե քրտնել ու տաքանալ: Տաքությունը կարող ե հաւնել մինչև 8. 70—100-ի, վորի ժամանակ հատիկի վոչ միայն քաշն ե պակսում, այլև, վորպես սերմացու, հատիկն անպետքանում ե:

Վորպեսպի այսպիսի բաներ չպատահեն, բարդոցելու կամ ծածկի տակ դնելու ժամանակ ողանցքներ պետք ե թողնել: Բարդն այնքան պետք ե լինի, վոր մի որում ծեծվի—վերջանա: Բարդոցելու համար չոր տեղ պետք ե ընտրել տակը բան դնել և հասկերը դեպի ներքեանել Տակնոցի բարձրությունն առնվազն ¹/₂ մետր պետք ե լինի: Տակնոցը հացը խոնավությունից պահում ե: Բարդելուց հետո գլուխը ծղոտով պետք ե ծածկել և լավ պնդացնել, վոր քամին չտանի:

Յեթե դաշտում չի հաջողվում հացը լավ չորացնել և խորհնտեսությունը կամ կոլտնտեսությունը հատիկի չորանոցներ չունի, այն գեպքում կալսիլուց առաջ հացը պետք ե չորացնել զանազան տեսակի խրձաչորանցներում:

ՀԱԾԻԿՆ ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ՊԱՀԵԼ

Վերևում արդեն արացինք, վոր թոնըի վրա կամ թաղաքը չորացնելու նախնական ձեռքը սոցիալիստական տնտեսության համար միանգամայն անգործադրելին լին: Նույնը պետք ե ասել նաև պահելու նախնական ձեռքի մասին: Մանր տնտեսությունները հատիկը պահում են վանդականաման փոքրիկ փեթակներում, կամ ջվալներով խոթում են թախտերի տակ: Կամ ուղղակի շեղ են տպիսամբ վորեն անկյունում:

37360.12



Պարզ բան ե, վոր այսպես պահելուց ահազին կորուստ ելինում:

Մուկը, առնետն ու մյուս մնասատուներն ահազին հասիկ են փշացնում, վորովհետև բոլորի համար ել ճանապարհը բաց ե դեպի հատիկը: Իսկ մնասատուների դեմ կովելը հնարավոր չե: Վնասատուների վոչընչացման գործ կազմակերպել չի կարելի, քանի վոր հատիկը տասնյակ ու նույնիսկ հարյուրավոր շենքերի և շատ անգամ ել տների մեջ ե գտնվում: Բացի այդ, թունավոր նյութեր բանեցնելն այս դեպքում վոչ միայն անողուտ ե, այլև վտանգավոր ե մարդկանց ու անատունների համար: Այս ձեռվ պահելու արդյունքն այն ե լինում, վոր զզալի կորուստներ են տեղի ունենում, հատիկը գույնը գցում — դաւնումե աղբագույն: Բոլորովին ուրիշ բան ե, ինքը հատիկը պահվում ե հատկագես հարմարեցված շենքերում ու մեծ քանակությամբ: Այս դեպքում միանգամայն հաջող կերպով կարելի յե կազմակերպել վոչ միայն հատիկը կանոնավոր խնամելու գործը, այլև մնասատուների դեմ կը վելու համար կիրառել գիտության կողմից հանձնարարվող միջոցները: Փորձը ցույց ե տալիս, վոր հատկապես կառուցված պահեստներում պահվող մեծաքանակ հատիկն իր արժեքավոր հատկությունը չի կորցնում: Մընչդեռ անհատական դյուքս անհատական տնտեսությանը հատիկի կանոնավոր պահելու միջոցները մատչելի չեն, այնինչ այժմ, տնտեսություն վարելու կողեկտիվ ձևերին անցնելով՝ լավ պահեստ կառուցելը վոչ միայն կատարելապես հնարավոր ե, այլև անհրաժեշտ ե, Բաց նախքան կանոնավոր պա-

հելու ձևերի նկարագրելը, կանգ առնենք այն փոփոխությունների վրա, մօր տեղի լեն ունենում հատիկի պահելու ժամանակ:

Ի՞նչ ԿՈՐՈՒՍՏՆԵՐ ԵՆ ՊԱՏԱՀՈՒՄ ՊԱՀԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ

Պահեստ լցրած հատիկը ժամանակի ընթացքում կորցնում ե իր քաշի մի մասը: Պակարդի մեծությունը շատ պատճառներ ունի, վորոնցից պակաս կազմութեր չեն խաղում՝ հատիկի խոնավությունը, շենքի վիճակը, պահելու ձևը, տարվա յեղանակը և այլն: Եւեղի-հեղի քաղված հատիկի քաշն ավելի շատ պակսում, քան ավելի ինը լցրած հատիկը: Հեղի-հեղի քաղածի և պահեստ լցրածի քաշի պակսորդը մի տարուց հետո յերբին համառ ե — ցորնինը՝ $2,5 - 3,5^0_{\text{0-ի}}$, գարունը՝ $3,5^0_{\text{0-ի}}$, լուսաղիներինը՝ $2 - 6^0_{\text{0-ի}}$ և յուղատուներինը՝ $6 - 9^0_{\text{0-ի}}$: Ցերկորդ տարին կորուստը կրկնակի յե լինում: Հին հատիկը 12 ամիս պահելուց հետո 1^0_{0} միայն կարող և կորցնել: Կորուստները հավասար չափով բաժանել քառամսյակների, նույնպես հնարավոր չի: Առաջին քառամսյակին 45^0_{0} և ընկնում, վերջինին՝ մինչև 10^0_{0} : Այսպիսի կորուստներ նկատվում են կոլտնտեսությունների ու խորհութեանությունների պահեստներում, վորտեղ հատիկը կանոնավոր ե պահվում: Իսկ զյուղացիական շտեմարաններում, վորոնք հատիկ պահելու համար վոչ մի հարմարություն չունեն, կորուստները կարող են կրկնակի, նույնիսկ յեռակի չափով ավելի լինել և հասնել մինչև $20^0_{\text{0-ի}}$:

Քաշը հաճախ պակսում ե ի հաշիվ խոնավության
Յեթև հատիկն առանց չորացնելու լցնենք պահեստ,
ամենալավ խնամելու գեպքում ել խոնավությունը
կկորցնի և ժամանակի ընթացքում հասնի այն փե-
ճակին, ինչպես դուրսը չորացրածը, այն ե՝ 6—8 °
ջուր կկորցնի Հենց ավելորդ ջրի հաշվին ել տեղի
կունենա ցամսքելը։ Ա սպես, յեթե պահելու ժամա-
նակ հատիկը 4 ° և կորցնում, քաշի պակսորդը մո-
տավորապես 4,8 ° ի հասնի Բայց հատիկները վոչ
միայն խոնավություն են կորցնում, ալլև լավ չպահե-
լու դեպքում նույնիսկ ողից ան խոնա լություն ծծում։
Այս հատկությունն ունեն առանձնապես լորագի հա-
տիկները—սիսերը, զիկը յայլն։ և Խոնավությունը
վորքան բարձր ե լինում, շնչառությունն այնքան ու-
ժեղ և կատարվում, հատիկի սեղ յեղած սննդարաբ
նյութերն այնքան շատ են փշանում։ Շնչառությունն
ուժեղանալուց տաքությունը բարձրանում ե, մի բան,
վոր նույնպես նպաստում ե կորուստներ առաջ գալուն։
Լավ մտիկ չանելու դեպքում հատիկը կարող ե տաքու-
թյունից ալրվել Խոնավու տաքացած հատիկը կարող
ե նաև հեշտությամբ ծլել կամ իր արժեքը կորցնել
վոչ միայն վորպես սերմացու, այլև վորպես պարեն և
կեր։ Բացի այդ, տաքացած հատիկը նպաստավոր պայ-
ման ե ստեղծում զանազան տեսակի սնկալին ու բակ-
տերային հիվանդությունների համար, վորոնք հատի-
կի ծլունակությունը սաստիկ գցում—դարձնում են
բոլորովին անբունելի։

Հատիկի կորստին նպաստում են նաև պահեստա-
յին զանազան մխաստուները—մուկը, առնեար, մի-
ջատը։ Մի մուկը տարեկան 1,5—3 կիլոգրամ հատիկ

ե ուտում, իսկ յեթե մկները շատ լինեն, կորուստը շատ
զգալի կարող ե լինել:

Հատիկի դիմացկանությունը՝ պահելու ժամանակ։
Պահելու ժամանակ ամեն մշակույթ ել միանման դի-
մացկունություն չի ունենում, յեթե նույնիսկ հատիկը
նորմալ հաստության ե,

Իրենց դիմացկունությամբ, մշակութները հետևյալ
կերպ կարելի յե դասավորել, ըստ վորում ամեն մի
հաջորդ մշակույթ ավելի քիչ դիմացկուն ե, քան նա-
խորդը։ 1) ցորեն, 2) հաճար, 3) գարի, 4) վարսակ,
5) վուշ։ Ցածրուակ, աղբոտ հատիկն ավելի քիչ դի-
մացկուն ե, քան նորմալ վորակինն ու աղբոտը։

Չոր հատիկը թե ամառը և թե ձմեռը յերկար կա-
րող ե պահվել, Միջին խոնավությունն ունեցող հատի-
կը կանոնավոր կարող ե պահվել միայն տարվա սառը
յեղանակին, իսկ տաք յեղանակին պահելն անհուսալի
յե։ Միջին խոնավության հատիկը լավ և անդուլ հըս-
կողություն ե պահանջում։ Խոնավ հատիկը պահելու
քիչ կդիմանա, այն ել միայն ձմեռ։ Խոնավ հատիկը
պետք ե անպայման չորացնել։

Այս հացը, վոր հնձի ժամանակ լավ հասած ե, ա-
վելի լավ ե պահվում, քան խակը։ Պահելու ժամանակ
խակ հացի միջ հասունացման պըրցես ե տեղի ունե-
նում, վորի հետևանքով դուրս են զբլիս տաքությունն
ու խոնավությունը։ Այս իսկ պատճառով՝ հեղի-հեղի
քաղված ու պահեստ լցվող հացի պահելուն առանձին
ուշադրություն պետք ե՝ դարձնել

Յեղանակը վորքան տաք ե լինում, ալնքան ավելի
դժվար ե պահվում նույնիսկ համեմատաբար չոր հա-
տիկը։ 0 ° կամ 2—3 ° տաքության ժամանակ նույնիսկ

խոնավ հատիկներն իրենք-իրենց այրվելու վտանդից
զերծ են լինում, յեթե շեղը բարձր չի և կարտուկների¹⁾ մեջ շատ չի լցված:

Զմեռ ժամանակ պետք ե աշխատել, վոր պահպող
հատիկի տաքությունը դրսի տաքությունից շատ
չտարբերվի: Իսկ ամառ ժամանակ հատիկի տաքու-
թյունը 8. 20—25°-ից բարձր չպետք ե լինի: Յեթե
տաքությունը բարձրանում ե, ուրեմն ինքնիրեն ալր-
փելը հնարավոր ե, ուստի և ամեն տեսակի միջոցներ
պետք ե ձեռք առնել տաքությունն իջեցնելու:

ՊԱՀԵԼՈՒ ՑԵՂԱՆԱԿԸ

Պահեստում հետեւալ ձևով կարելի յե հատիկ պա-
հել: ա) շտեմարանների (կտրտուկ) մեջ, բ) ջվալով
կամ պարկերով, հատակի վրա շեղշեղը արած: Պահելու
ձևի ընտրությունը կախված ե պահեստի սարքավո-
րումից, ամենից, ինչպես և հատիկների տեսակից:

1. Չոր հատիկը կարելի յե թե պարկերով պահել
η թե շտեմարանների մեջ ու հատակին լցնելով, 2.
խոնավ հատիկը լավ պահելու և լավ խնամելու համար
խորհուրդ ե տրվում շեղջով պահել: 3. Առանձնապես
չոր հատիկը, որինակ՝ կորնգանը, վուշը և ալն, բան-
ջարեղնի սերմորայքը պահվում են միմիայն աման-
ներում (պարկերում). 4. պահեստում տեղ շատ չըրոնե-
լու համար պարկերի մեջ պետք ե պահել նաև այն
գեղքում, յերբ վորեն մշակույթի հատիկ քիչ ե:

Կտրտուկներն այնպես պետք ե հարմարեցնել, վոր

1) Կարտուկ—պահեստի մեջ տախտակով կամ ցեմենտով իրար
կողքի, աչք-աչք կտրատված տեղերն են ։ Նախը. քարզ:

տեսակավոր հատիկներն իրար խառնվելու վոչ մի լեռ-
կուղ չլինի: Յեթե մի կտրտուկ պինդ կպչում ե մյու-
սին, պատերն ամուր պետք ե լինեն և առանց ծակ ու
ծուկի: Առաստաղ չեղած դեպքում կտրտուկների վրա
պետք ե բանդնել-ծածկել: Առանձնապես ուշադրություն
պետք ե դարձնել կտրտուկների հատակի վրա:

Ամեն մի կտրտուկի մեջ մի տեսակ հատիկ միայն
կարելի յե լցնել, այն ել վորոշ տեսակավոր մաքրու-
թյամբ և ֆիզիկական հատկություններով: Թաց հա-
ռիկը չի կարելի չորին խառնել, վորովհետև, պահելու
տեսակետից, այս դեպքում ամբողջ պահեստն անհու-
սալի յե դառնում, քանի վոր տեղ-տեղ կարող ե այր-
վել:

Սկրմացուն շտեմարանների մեջ պահելիս, շեղի
բարձրությունը կախված ե չորությունից: Հատիկը
վորքան չոր լինի, շեղն աչնքան բարձր կարելի յե
անել: Չոր հատիկի շեղջի բարձրությունը շտեմարանի
մեջ կարելի յե 3,5 մետր անել: Լավ կտրմակերպված
շտեմարաններում շեղջի բարձրությունը զգալի չափով
ավելի յե լինում: Շենքի պակասության դեպքում
չեղջի բարձրությունը հետեւալ չտիռվ կարելի յե ա-
նել.

Միջին խոնավ թաց
չորություն

Տարվա ստույն յեղանակին	4 մետր	3 մետր	2 մետր
» տաք յեղանակին	2	1	0,5 »

Յուղատու բուլյունի շեղջի բարձրությունն այս
նորմանների կիսից ավելի չպետք ե լինի:

Հատիկը վորքան ավելի խոնավ լինի, շերտն ալն-
քան, բարակ պետք լինի:

Կտրառուկներն այնպես պետք եւ շինել, վոր պահեստի դրսի պատերից հեռու լինեն (արանք մնա), թե չեւ պատերը դրաի ողի տաքության փոփոխությունը հճաղորդեն, վոր և կանդրադառնա պահվող հատիկի վորակի վրա:

Սերմացուն պարկերի մեջ պահելիս այնպես պետք եւ դարսել, վոր պատերի ու ծալքերի միջև պատահանցուղարձի տեղ մնա և հնարավոր լինի հակել պահվող հատիկի վրա: Ավելի լավ կլինի տոպարակների ծալքերի տակ փայտ դնել, մանավանդ ալն պահեստներում, վորոնց հատակը ցեմենտ, ասֆալտ կամ աղյուս ե.

Պարկերի մեջ պահվող սերմացուն պետք եւ դարսել առանձին կույտերով, ուղիղ, հորիզոնական շարքերով և պարկ-պարկի վրա: Բներանների կարը կամ կապը դրսի կողմից պետք եւ անել, վոր հատիկն ստուգելու համար հարմար լինի:

Պարկերի լուրաքանչյուր ծալքի լերկարությունը կախված եւ ընդհանուր քանակից, իսկ բարձրությունը՝ հատիկի տեսակից ու խոնավությունից:

Տարվա բոլոր լեղանակներին չոր հատիկի նորմալ դարսվածքը պետք ել լինի 8—10 շարք: Մուջրն չորություն ունեցող հատիկն ավելի լավ կլինի սառը յեղանակին՝ 6—8, իսկ տաք յեղանակին՝ 4—6 շարք դարսել իրար վրա: Խոնավ հատիկը սառը յեղանակին՝ 6 շարք, տաք յեղանակին՝ 2—4 շարք, թաց հատիկը սառը յեղանակին՝ 4—6 շարք, իսկ տաք յեղանակին պարկերը կանդնած դնել ու բերանները բաց թողնել:

Ենքը նեղ լինելու դեպքում կարելի յեւ նաև ավելի բարձր դարսել բայց միջին չորության հատիկը սառը յեղանակին 18 և տաք յեղանակին 10 պարկից

ավելի չոլետք ել լինի, խոնավը—սառը յեղանակին՝ 14 և տաք լեղանակին՝ 8, իսկ թացը—սառը լեղանակին՝ 10 և տաք լեղանակին՝ 4 պարկից վոչ ավելի: Չոր հատիկն ավելի բարձր կարելի յեւ դարսել: Այսպես կարելի յեւ դարսել հաճարը, ցորենը, վարսակը և գարին, իսկ վուշը հիշյալ նորմաների կիսից ավելի բարձր դարսել չի կարելի:

Ծալք գնելիս, պատերի ու ծալքերի մեջտեղն անպատճառ 70—100 սանտիմ. արանք պետք եւ թողնել, վոր թե աշխատանքը չխանգարվի և թե աղատ ող խաղա:

Թի տեսակավոր մաքրության և թե ֆիղիկական հատկությունների տեսակետից ամեն մի ծալքում անպատճառ միանման հատիկ պետք ել լինի:

Ինչպես ամեն մի կորտուկը, այնպնս ել ամեն մի ծալք պետք եւ համարակալվի, այսինքն՝ վրան պետք եւ գրվի պարտիայի Ն-ը, հատիկի տեսակը, ծագումն ու քանակը:

Հատիկը բաց կարելի յեւ պահել կամ պահեստի հատակի վրա շեղ տալով և բուռքն առանց լիքը պարկեր շարելու, կամ թե շաբած՝ այսպես կոչված՝ հորերի մեջ: Հատակի վրա շեղ տալու դեպքում ամենից առաջ ուշադրություն պետք եւ դարձնել, վոր հատակը ճեղքեր չունենա, հատիկը տակը չթափվի: Հատիկը միայն չոր հատակի վրա կարելի յեւ շեղ տար Յեթե հատակը խոնավ ե, ավելի լավ կլինի վրան տախատակ դնել, տախատակների վրա պարկ կամ խորի, ապա շեղ տակ և շարունակ հակել, վոր այդ պարկերը կամ խորիները չոր ու մաքուր լինեն: Հատիկը միահավասար եւ լցվում, և շերտի հաստությունը հատիկի խոնավության համեմատ պետք ել լինի: Յեթե հատիկը չոր ե, կարելի յեւ շեղին բարձրությունը 3,5 և նույնիսկ 4 մետր անել: Թաց հատիկը վոչ մի դեպքում 0,5 մետրից ավելի չի կարելի լցնել: Ընդ-

հանրապես՝ բաց պահելու դեպքում ել շեղջը նույն բարձրությունը կարող է ունենալ ինչ վոր շահմարանների մեջ եւ: Բաց պահելու դեպքում հատիկի և պատերի մեջտեղը 0,5 մետր արանք պետք է թողնել: Այսպիսի արանքներ պետք է թողնել պահեստի յերկարությամբ և մեջտեղը: Բաց պահելու դեպքում պետք եւ խուսափել միմնույն շենքի մեջ զանազան տեսակի հաց և նույնիսկ միմնույն հացի տարրեր տեսակներ դնելուց:

Յեթե շենքը պակաս է կամ հնարավորություն չկա շահմարաններ շինելու, այս դեպքում հատիկը հորերի մեջ կարելի յե պահել: Նախքան հատիկը հորերի մեջ լցնելը, բոլորքը մի շարք լիքը պարկ են շարում և ինչ ձեր ու մեծության հոր ուղղում, այն ձեր ու մեծության ել դուրս են բերում: Շարքը պարկ ու կիսից ե դրվում: Առաջին շարքից գոյացած տարածության մեջ հատիկ լցնելուց հետո, լերկորդ շարքն այնպես են դնում, վոր տակի շարքն աժրանա, վորից հետո նորից հատիկ են լցնում: Առաջին և լերկորդ շարքերն ուղիղ են դրվում, իսկ լերկորդ շարքից սկսած հորի պատերը մեջ են քաշում: Պատերի բարձրությունը միջին հաշվով պետք է լինի 10 պարկ: Յեթե կասկած կա, վոր հատիկը կարող է հատակից խոսվություն քաշել, այս դեպքում ավելի լավ կլինի, ինչպես վերն ասացինք, հատակի վրա տախտակ փուել վրան պարկ կամ խսիր քաշել՝ ապա հատիկը լցնել: Հորի պատերը պահեստի պատերից վորոշ չեռու պետք ե լինեն:

Հատիկը հորերի մեջ պահելիս շատ զգուշ պետք է լինել: Հատիկը բաց շեղջ տալու դեպքում, ոդի հետ ավե-

լի մեծ շփում ե ունենում, ուստի և կարող է մեծ չափով խոնավություն ծձվել, վոր և կնպաստի հատիկի փչացմանը:

ՀԱՅԻԿ ՊԱՀԵԼՈՒ ՇԵՆՔՆ Ի՞ՆՉ ՊԱՀԱՆՁՆԵՐ ՊԵՏՔ Ե ԲԱՎԱՐԱՐԻ

Հատիկը կանոնավոր պահելու նպատակն եւ. 1. պահանքնել հատիկի բոլոր արժեքավոր հատկությունները, վորոնք հատիկը պիտանի լին դարձնում վորպիս սերմացու և հնարավորություն են տալիս գործածելու վորպիս պարեն և կեր. 2. հատիկը պահել տեսակավոր այնպիսի մաքրությամբ, ինչպիսի մաքրությամբ պահ և տրված, յեթե պահելու համար նախատեսվում ե տեսակավոր սերմացու:

Սա նպատակին կարելի յե հասնել այն դեպքում, յերբ հատիկը կանոնավոր պատրաստված ու լավ սարքավորված և պահվում, իսկ հատիկ պահելու շենքն ինչպիսի շենք պետք է լինի: Ամենից առաջ՝ չոր տեղ պետք և շինել, վոր շուրջը ջրեր չլճանան: Գարնան հալոցից ու անձրևաերից գործած ջրերը, վորոնք լճանում են հատիկանոցի շուրջը, պետք և ցամաքեցնել կամ փոքրիկ առվակներ (ջրտար) հանելով, կամ, ամենից լավ և, ջրատար խողովակներ դնելով: Թե առվակները և թե խողովակները շատ մաքուր և կարգին պետք ե պահվեն:

Հատիկանոցները վորոշ չափով հեռու պետք ե կառուցվեն թե բնակելի շենքերից և թե այնպիսի շենքերից, վորոնք հրդեհի տեսակետից վտանգավոր են, ինչպես որինակ՝ մարագ փուռ և այլն:

Տանիքը պետք ե լինի ջուր չծծող, կրակի դիմացող և տաքություն շատ չանցկացնող նյութերից:

Ամենալավ հատակն ասֆալտից կամ բետոնից պատրաստածն ե, վորովհետև այսպիսի հատակը կարելի է այնպես հարթ, հավասար, առանց վորեն ճեղքվածքի անել, վոր վրան վոչ մի աղբ չկարողանա մնալ, իսկ յեթե, ճարահատյալ, հատակը փայտից են անում, այն դեպքում պետք ե աշխատել, վոր հարթ, հավասար և ամուր լինի: Մկների, առնետների ու միջատների գեմ կովելու, ինչպես և գետնի խոնավությունից ազատ պահելու համար հատակը գետնից մի քիչ բարձր պետք ե անել: Յեթե լերկլուղ կա, վոր պատերն ու հատակը կարող են հիմքից խոնավություն ծծել, այս դեպքում ջրից պաշտպանող մեկուսիջներ պետք ե դնել տակը: Պատերը նույնպես ուղիղ, հարթ և ամուր պետք ե լինեն: Յեղած նյութերով—կիր ցեմենտ և այլն—ծակ ու ծուկը լավ պետք ե լցնել-սվաղել: Առաստաղն ամուր առանց ճեղքվածքների, բայց առանց ծեփի պետք ե լինի, վորովհետև սովորաբար ծեփը թափվում և հատիկ կեղտառաւմ ե: Յեթե արդեն կառուցված պահեստներն առաստաղ չունեն, պետք ե շինել, վորովհետև առաստաղը չի թողնում թե արեի ճառագայթներից տաքացած տանիքի տաքությունը ներս ընկնի և թե կաթիքի ժամանակ հատիկը թրջվի: Շենքն այնպես պետք ե հարմարեցվի, վոր կարելի լինի ողափոխել: Ողափոխության համար կարելի է թե դոներն ու լուսամուտներն ողտագործել և թե հատուկ ողատար խողվակներ դնել: Լուսամուտներն ու ծակերը պետք ե լավ գանդակապատվեն, վոր թոշունները չկարողանան ներս մանել, թոշունների ներս մտնելը վոչ միայն

վտանդավոր ե այն պատճառով, վոր պահեստում յետ դածը կարող են վչացնել այս և այն պատճառով, վոր կարող են պահեստը կեղտոտել: Ողափոխության համար ավելի լավ կլինի հատիկանոցի դռները լիրկուտակ անել—դրսնը՝ խուլ (լիքը), իսկ ներսինը՝ վահագակապատ:

Լուսավորության տեսակետից պահեստներն այնքան ել լուսավոր չպետք ե լինեն: Լույսն այնքան պետք ե լինի, վոր կարելի լինի անհրաժեշտ աշխատանքները կատարել: Ավելի լավ ե արհեստական լուսավորություն անցկացնել և ապահովել յերդիկի վտանգից: Շենքի ուղղությունն ավելի լավ կլինի հյուսիսից-հարավ անել, լերկար կողմերը դարձրած արեւելքից արևմուտք: Շենքն այս ուղղությամբ կառուցելիս, ամառն ավելի հավասարաչափ ե տաքանում, վոր և հատիկ պահելու համար ելական նշանակություն ունի: Ավելի լավ կլինի դռները, ծակերն ու ողանցքները դեպի հյուսիս ու հարավ անել, վորովհետև այսպես շինելիս շենքը լավ ե ողափոխվում: Անհրաժեշտ ե բարձել-դատարկելու համար կառուցել թեկուղ հենց ամենապարզ ու մեքենայնացված այնպիսի միջոց, վոր ամեն մի բառի կարելի լինի ավելի մեքենայնացված ձեռքի անցնել: Թե նոր պահեստ կառուցելիս և թե լեզածն ողտագործելիս նկատի պետք ե ունենալ, վոր մի խորանարդ մետք ծավալի մեջ տեղապորվում ե ցորեն՝ 7,4 ցենտներ, հաճար՝ 7,0 ցենտներ, գարի՝ 5,8 ց., վարսակը՝ 4,2 ց.:

Ահավասիկ այն կարևորագույն պահանջները, վոր արվում են թե լավագույն հատիկանոց կառուցելու և

թե կանոնավոր պահելու համար յեղած պահստները
հարմարեցնելու նպատակով:

ՀԱՏԻԿԱՆՈՑՆԵՐԻ ԶԵՎԵՐԸ

Պարզ բան ե, վոր թե ինամքի բոլոր միջոցները,
վորոնք հատիկը պաշտպանում են փշանալուց և թե
հատիկի կանոնավոր պահելը հնարավոր են միայն սո-
ցիալիստական-սեկուլյարի տնտեսության լավ պատրաս-
տած պահստներում:

Կոլտնտեսություններում պահստներ շինելու հա-
մար նոր ձև ե մշակված: Պահեստը կարելի է շինել
թե քարից և թե փայտից, 1000—3000 ցենտներ տա-
րողությամբ: Նայած տեղական պայմաններին, հատի-
կանոցի պատերը կարելի է շինել քարից, փայտից
կամ աղյուսից:

1000 ցենտներանոց հատիկանոցն ունի 6 շտեմա-
րան (բաժանմունք), ամեն մեկը 25-ական խորանարդ
մետրանոց և յերկու հատ ել՝ 15-ական խորանարդ
մետրանոց: Նկատի ունենալով, վոր 1 խորանարդ մետր
հաճարը միջին հաշվով 0,7 տոնն ե քաշում, իսկ
վարսակը՝ 0,45 տոնն, հաճարի համար ստանում ենք
1261, վարսակի համար՝ 810 ցենտներ տարողություն:

Շտեմարանները բանում են 81 քառակուսի մետր
տարածություն, վոր բաժանված ե 9 քառակուսիների,
վորոնցից 8-ն զբաղեցնում են շտեմար անները, իսկ
9-ը բանում, վոր կենտրոնն ե բանում, հատիկի վերհան
շախտն ե կառուցված: Հատիկը վեր ե բարձրանում
լեռեղկալով (կարտպ), վոր ամրացվում ե վերհան շախ-
տի անկյուններում կանգնած սյուների վրա: Հատիկ

ընդունելու համար շտեմարանների առաջ 48,5 քառա-
կուսի մետրանոց մի շենք և շինվում, վորտեղից դուռ
ե թողնված դեպի չարգախոր: Շտեմարանների պատե-
րը լինում են փալտից կամ տախտակից և ողափոխու-
թյան համար անցքեր են ունենում: Հատիկը տախ-
տակից ե ու գոգավոր: Հատիկանոցի պատերը կարող
են քարից կամ փայտից լինել: Փայտե պատերը պատ-
վանդանի սյուների վրա լին շինվում: Պատերի հաս-
տությունը 18 սանտիմետր ե, կրծքներից (մուկ, առ-
նետ և այլն) պաշտպանելու համար բոլոր սյուների
վրա մետաղե գդակներ են դնում: Հատիկ լցնելու
համար կտրտուկների վրա ճանապարհ (կամուրջ) են
գցում և կողքերին բազրիքներ շինում, վոր բանվոր-
ները չընկնեն բաց կտրտուկների մեջ:

Հատիկ պահելու ամենալավ ձեն ելեվտառոններում
պահելն ե, ելեվտառոններն ամենալավ կառուցված և
ստրավորված պահստներն են, վոր թե հատիկ պահելու
և թե հատիկ վերհանելու, զտելու, չորացնելու և տե-
սակավորելու համար բոլոր հարմարություններն ունեն:
Ելեվտառոնները շինվում են յերկաթուղու կայարանների
ու նավահանդիստների մոտ և սոցիալիստական սեկ-
տորի խոշոր տնտեսություններում: Ելեվտառոններն
աբնպիսի շենքեր են, վոր հարլուրավոր տոնն հացա-
հատիկ են պարտակում, ելեվտառոնների բոլոր հարկե-
րում ել շտեմարաններ են շինվում, վորոնք կոչվում
են սիլոս: Սիլոսները վերեկց պինդ ծածկվում են և
լավ հարմարեցված են (միայն չոր հատիկը) լեռկար
ժամանակ պահելու համար: Հատուկ վերհաններով հա-
տիկն ինքնիրեն (մեխանիկորեն) բարձրանում ե վե-

բեկի հարկը և այնտեղից լցվում է Հատիկը վագոն բարձելու գործն ել և մեքենայնացված:

Կոլեկտիվ և խորհրդային տնտեսությունների աճումը հիմա շատ առաջ ե անցնում շինարարության տեսպերից: Ուստի յեթե լավ շինված հատիկանոցները չկան, հատիկ պահելու համար ամենից առաջ պետք ե ոզմագործել կուլակալին տնտեսությունների շենքերը, այն եւ պահեստները, սարայները և հենց բնակելի շենքերն ել, յեթե ուրիշ բաների համար չեն ոգտագործվում: Գյուղ տեղերում ծածկած ու դատարկ վանքեր, տեղեղեցիներ, ուխտեղեր շատ կան, վորոնք նույնպես հրաշալի կերպով կարող են ոգտագործվել սերմացուներ պահելու համար: Սրանց տաճիքները մեծ մասմբ փայտից են և տաքություն շատ չեն անցկացնում: Հարկավոր ե միայն մեջը կտրտուկներ շինել: Իսկ յեթե կտրտուկներ շինել չի կարելի, այն ժամանակ պարկերով պետք և ծալք դնել և այսպես պահել:

Այս միջոցները կարող են հանձնարարվել վորպես ժամանակավոր միջոցներ: Իսկ ամենից լավը՝ հատիկը կողեկտիվ պահեստում պահելոն ե:

Սերմացու հատիկը հասարակական պահեստներում պահելու առավելությունը հետեւյալն ե.

1. ամբողջ գյուղի և նույնիսկ միքանի գյուղի սերմացու հատիկ պահելու համար այնպիսի պահեստներ կառուցել, վոր կանոնավոր պահելու բոլոր պահանջները բավարարի:

2. այսպիսի մի պահեստ կառուցելու ավելի եժան կնստի, քան ամեն մի տնտեսության վանդականման փոքրի կեթակներից շատերինը.

3. այսպիսի մի պահեստ, վորտեղ միքանի գյուղի սերմացու կպահվի, կարելի լի սարքավորել հատիկ զառյառութեակի կարեոր մեքենաներով, վորոնք գյուղական մանր բաժանումը մանր, բաժան-բաժան տնտեսություններին բոլորովին մատչելի չեն:

Մերմի զառյան ու տեսակավորումը կարելի լի կատարել մեխանիկական շարժիչի միջոցով, վոր թե աշխատանքի վորտեղ զգալի չափով կրաքարացնի և թե աբարդրողականությունը կլավացնի:

4. Բայց տեսակի կրծողների զեմ, վորոնց մասին կխոսենք քիչ հետո, կովկելու գործն ավելի հաջող կարող ե գնալ, քան գյուղական առանձին խղճուկ փեթակներում: Հետեւապես՝ կարելի ,ե հատիկը փշանալուց ազատ պահել և կորուսաները մեծ չափով պակսեցնել:

5. ցանելուց առաջ հատիկը շատ հաջող կարող լի ախտահանվել և ախտահանիչ նորութ քիչ ծախսվել: Ախտահանությունը կարելի յի կատարել զանազան մեքենաներով, վոր մենատնտեսությունների ուժը չի պատի գնել: Յեւ բ աբարդրողականությունը մեծ ե, մեքենաներով ախտահանելու ավելի ապահով կլինի, քան ձեռքով:

6. Հատկապես հատիկ պահելու համար ու լավ սարքած պահեստում հատիկի խնամքը շատ-շատ ե հեշտանում: Հատիկն ինքնիրեն տաքանալու և փշանալու ամեն մի լերկ ուղ ինքնիրեն կարող ե վերանալ:

7. Հատիկը հրդեհից ապահովագրել կարելի յի մէան հանրա,ին պահեստում: Գյուղական փոքրիկ շտեմարաններն այնքան վատ են շինված, վոր անտեղ պահող հատիկն ապահովագրելու հսարավորություն չկա: Մեծ պարտիաների ապահովագրումն ել եժան կնստի:

ՀԱՏԻԿԱՆՈՑԻ ՈՒ ՀԱՏԻԿԻ ԽՆԱՄՔԸ

Թե պահելու համար լցըած ու դարսած հատիկը և թե հատիկանոցը նեսց ինքը հարկավոր խնամք են պահանջում: Հատիկանոցների խնամքի զլիավոր պատմաններից մեկն այն ե, զոր թե ներսից և թե դրսից չորս բոլորքը մաքուր պահվի:

Հատիկանոցի մոտ աղբի, դարմանի, ցախի կույտեր լինելը սիանգամայն անթույլատրելի յի, զորովհետև մկների և զանազան միջատների բուն կարող են դառնալ:

Արանք-արանք անհրաժեշտ ե պահեստը թե հիմնվին և թե պարբերաբար մաքրել Հիմնովին պիտի մաքրվի առնվազն տարին մի անգամ, գլխավորապես գարունն սկսվելուն պես, յերբ զանազան զնսատուները դեռ չեն արթնացել: Իսկ յեթե գտրնանը չի կարելի հիմնովին մաքրել, ապա պետք ե գցել այնպիսի ժամանակ, յերբ պահեստները հատիկից աղատվում են, կամ թե, լցնելուց առաջ:

Հիմնովին մաքրելուց առաջ անհրաժեշտ ե շենքն ախտանինել թունավոր նորթեր ծուխ տալու կամ սրսկելու միջոցով: Բոլոր տեսակի սիջատների ու կըրծողների դեմ գործադրվելիք ամենալավ միջոցը ծծըմբածխն ծուխ տալն ե: Ծծմբածխածինն ամենաուժեղ թույնն ե: Ուստի և գործադրելիս շատ և շատ զգուշ պետք ե լինել: Ծծմբածխածին գործածելու ձեւը ցույց ե տրվում ստորև: Ծծմբածխածով կարելի յի ախտացնում կատարել նաև այն ժամանակ, յերբ պահես-

տում հատիկ կաւ Մյուս թունավոր նկութը՝ խլորապիկրինը՝ կարելի յե զործածել ախ շենքերում, վորտեղ դեռևս հատիկ չկա, վորովհետև խլորապիկրինը հատիկ-ների ծլունակության վրա ազդում ե: Սերմացուն ախտահանելուց հետո բրեղենատով ծածկում են զոր չկեղտոտավի և ապա սկսում են հիմնովին մաքրել: Մըրած աղբը, փոշին ու վոստայնն ավելի լավ կլինի մի տեղ հավաքել և այրել:

Մաքրելուց հետո պատերը նոր հանդցրած կրով սպիտակացնում են և ծակուծուկը սվաղում կրի ավելի թանձր լուծույթով: Հատակի տակն ել նոր հանդցրած կրի լուծույթ պետք ե լցնել:

Պահեստում լեղած թե բոլոր փայտե տակնոցները և թե շտեմարանների տախտակները, լեթե քանդովի յեն, լավ մաքրվում և ողափոխվում են:

Նայած հավաքվող փոշուն, պահեստը պարբերաբար պետք և մաքրել, զորի ժամանակ մաքուր սրբում են թե պատերի ու առաստաղի և թե շտեմարանների պատերի, դռների ու մլուս տեղերի փոշին ու վոստայնը: Մաքրում են նաև բոլոր անկունները, անցքերը և այլն: Հատակի տակն ել պետք և լավ մաքրել, վոր զանազան աղբակույթեր հնավագվեն այնտեղ: Ենթե հատակի տակն այս գրության մեջ ե, վարակի բուն և դառնում, ալնտեղ ամեն տարի բազմաթիվ ֆլաստուներ են առաջ գալիս, զորնք անցնում են պահեստը:

Բացի շենքի խնամքից, պահեստներում պահվող սերմացվի խնամք ել և հարկավոր Մալք գրած սերմացուն պետք և տեղափոխվի: Թե քանի անգամ պետք և տեղափոխվի, կախված և հատիկի խոնալությունից

ու տարվա յեղանակից։ Հատիկը վորքան խոնավ լինի, ծալքն անքան շուտ-շուտ պետք ե տեղափոխվի։

Նորմալ (14⁰ օ. ից վոչ ավելի) խոնավություն ունեցող սիրմացուն տարվա տաք յեղանակին յերեք ամիսը մի անգամ կարելի է տեղափոխել, իսկ խոնավ ու թաց հատիկը՝ առնվազն ամիսը մի անգամ։

Գարնան ժամանակ ծալքերի մեջ տաքությունը ցածր պահելու համար տեղափոխությունը պետք է կատարել այն դեպքում միայն, յերբ հատիկը տաքանում կամ ծլում է,

Թե պարկերով և թե բաց պահպող հատիկը պետք է պահպանել ողի և հատիկի ու պատերի խոնավությունից և, վորքան կարելի է, սառը պահել չենց այս պատճառով ել թե հատիկանոցում և թե հատիկի տակ ողանցքներ պետք ե սարքվեն։

Ողափոխություն կատարելիս ել վորոշ կանոններ պետք ե պահպանվեն Հատիկն ամենից շատ զարունա ու աշունը, տաքությունը փոխելու ժամանակ և ֆչանում։ Չոր ու պարզկա ձմեռները նույնիսկ խոնավությունը բարձր հատիկը համեմատաբար լավ ե բլահվում։

Տաք ու խոնավ ողը սառը հատիկին դիպչելիս, ինչպես գարունն և պատահում, շատ վտանգավոր ե։ Սառը հատիկին դիպչելիս, ողը սառում է, և մեջը յեղած գոլորշին նստում է հատիկի վրա։

Չենց այս պատճառով ել ողափոխությունը պետք է կատարել խիստ հետևելով ողի և տաքության առաջանին։ Յերբ դրսի ողը խոնավ է, դուրսը մասսախուզ է, անձրև և գալիս և ընդհանրապես ողը խոնավությամբ լցված է, պահեստի դռները, լուսամուտներն ու ողանցքները պետք ե փակ պահել, վոր դրսի խո-

նավ ողը բոլորովին չհասնի հատիկին։ Պահեստն այն ժամանակ ել պետք ե փակ պահել, յերբ յեղանակը լավ է, պարզ ու տաք, բայց ցրտերից հետո հատիկը դեռ չի կարողացել տաքանալ և դրսի ողի տաքությունն ընդունել։ Այս կարգը պետք ե պահպանել նաև գարնանը, յերբ հատիկը հեշտությամբ խոնավանում ե։ Ողափոխություն համար գուռ ու լուսամուտն այն դեպքում միայն կարելի է բացել, յերբ դրսի ողը լավ չոր է և հատիկի տաքությունը դրսի ողի տաքությունից շատ չի տարբերվում։

Անկախ այն բանից, թե ինչպես ե հատիկը պահվում և ինչ աստիճանի խոնավություն ունի, անհրաժեշտ և հսկել և հատիկի տաքությունը չափել։ Հատիկի տաքությունը վիրոշելու ամենալավ մրջոցը փարտի մեջ հագրած ջերմաչափը 30—40 ըոպե հատիկի մեջ պահեն է։ Յեթե ջերմաչափը չկա, հատիկի տաքության աստիճանը կարելի յե վորոշել կամ ձեռքը հատիկի մեջ դնելով կամ ձողի միջոցով, իսկ ծալրանեղ դեպքում՝ փայտե ձողի միջոցով։ Բաց կամ պարկերի մեջ պահպող հատիկի մոջ հիշալ նպատակով զանազան տեղից մետաղե ձողեր են դնում, վորոնք ամեն որ՝ հանում—շոշափում են։ Տաքացած մետաղե ձողն ապացուցում է, վոր դրված տեղի հատիկը տաքացել է։ Չողերի տեղն ամեն որ փոխում են։ Այսպես ել փալտե ձողերի միջոցով ե տաքանալը վորոշված։

Յեթե ստուգելու ժամանակ պարզվի, վոր պարկերի մեջ պահպող հատիկը տաքացել է, ամբողջ պարտիան իսկուն պետք է ստուգել և պարկերի հատիկը դատարկել։

Դատարկելիս ծորը բարակ պետք ե լինի և փակ-

ված շենքի հատակի վրա դատարկվի, իսկ յերբ լեզա-
նակը լավ ե՝ բացովիա և բրեգնտների վրա ու լավ
ողափոխվի.

Տաքանալու առաջն առնելու համար, տեղափոխու-
թյան ժամանակ պարկերը հատակի վրա կանգնեցնում
և լայնությամբ ու յերկանությամբ հատակի վրա մի
քանի անգամ շուրջ-մուռ տալով ու զլորելով՝ թափ
են տալիս: Տեղափոխելու ժամանակ պետք և աշխա-
տել, վոր ծալքի տակի պարկերն ընկնեն լերեսը, իսկ
լերեսինը՝ տակը: Յեթե պարկերը տափակին են դըր-
ված, պետք ե դարձնել կողքի վրա և ընդհակառակը:
Յեթե կասկած կա, վոր ծալքի մեջ պարկերը կարող
են տաքանալ, կանգնեցրած պարկերը միաժամանակ
թողնում են, վոր լավ ողափոխվի ու չօրանա:

Յեթե պարզվում ե, վոր կտրառուկների մեջ հատիկը
տաքանում ե, ողափոխելու համար զանազան միջոց-
ներ են դորժ դնում: Ամենից առաջ՝ հատիկը պետք ե
թիռն տակ:

Թիռն պետք ե տալ չոր ու պարզ յեղանակին և
կուռ ու լուսամուտը բաց արած: Առանձնապես շուտ-
շուտ պետք ե թիռն տալ այն գեղքում, յերբ հատիկի
տաքությունը բարձրացած ե, վորովհետև այս գելքու
հատիկն այրվելու փշանալու յերկուղն ավելի շատ ե:

Յերբ հատիկը տաքանում ե, ավելի լավ ե քամհար
կամ զտող մեքենայով միքանի անգամ մաղեր: Լավ
թիռն տալիս, հատիկի տաքությունը միքանի աստի-
ճան իջնում ե ու խոնավությունը $1-20\%$ պահում

Շտեմարանների մեջ պահված հատիկն ողափոխելու
համար, հատուկ ողատար խողովակներ են դնում, վո-
ռնք շինգած են լինում ակոսածե, կերեք տախտակից

ու ծակոտիներով: Այս խողովակների ծայրերը պետք
ե դուրս գան պատերից:

Փեղկաձև կտրտուկներ ել են շինվում: Այս դեպ-
քում տախտակի ցածի պոռնիլը դեպի ներս են անում,
վոր հատիկը չթափվի: Լավ ողափոխելու համար, ծայ-
րահեղ դեպքում ողանցք կարելի յե պատբաստել կը-
տըրտուկի լայնությամբ ու յերկանությամբ լավ չո-
րացրած փայտե ձողեր շարելով, վորոնք կարելի յե
ուղղահայց ել տնկել:

ՎԵԱՍԱՏՈՒՆԵՐՆ ՈՒ ՊԱՅՔԱՐԻ ՄԻԶՈՑՆԵՐԸ

Միայն լավ չպահելուց չի, վոր պահեստի մեջ հա-
տիկը փչանում ե: Հատիկին մեծ վնաս են հասցնում
զանազան վնասատուներ, վորոնց մեջ աչքի ընկնող
տեղ են բռնում կրծողները—առնետը, մուկը, ալլե այն
միջատները, վորոնք կոչվում են պահեստի վնասատու-
ներ:

Հատիկի փչացումը յերբեմն մինչև 250°C ի յե հաս-
նում: Վնասված հատիկը վոչ միայն քաշն ե պակ-
սեցնում, ալլե միջի մննդարար ու կերի արժեքավոր
հատկություններն ել ե կորցնում, վորովհետև վնասա-
տուներն իրենց կզկղանքով ավականում են այն:
Վնասված քները հատիկի նշանակությունն ել են պա-
կասեցնում: Վնասված հատիկն արժեքից ընկնում ե,
ուրեմն՝ տնտեսության յեկամուտն ել պակասում ե:
Այս պատճառով ել հատիկի վնասատուների գեմ ամե-
նաանինա կերպով պետք ե կովել:

Մուկն ու առները: Պահեստի հատիկը շատ անգամ
մկներից ու առնետներից ե փշանում: Հատիկն առնե-
մկներից

որ գլխավոր կերակուրն ե, թեև ուրիշ բուսական ու կենդանական կերակուրն ել ե հաճուքով ուսում:

Առնետի բազմանալն անպատմելի յե—ե-ից մինչև 23 ձագ ե բերում, իսկ միջին հաշվով, տարեկան 6 անգամ բերում եւ Հաշվելով ամեն մի բերելուն 8-ական ձագ և նկատի ունենալով, վոր նոր ձագերը 3—5 ամսական հասակում արդեն սկսում են ծնել՝ կտեսնենք, վոր մի զույգ առնետի սերունդն 880 հատի կարող ե հասնել: Բարեհաջող պայմաններում այս թիվն ել ավելի կարող ե լինել:

Մկների ու առնետների դեմ կռվելու միջոցները կարող են լինել նախազգուշական ե վոչչացնող:

Նախազգուշական միջոցների շարքն են դասկում պահեստները կանոնավոր պատրաստելու և հարմարեցնելու արանք միջոցները, վորոնք ցույց են տրված վերը: Սակայն ձեռք առնելով կրծողներին պահեստ չթողնելու անհրաժեշտ միջոցները՝ միաժամանակ հոգ պետք ե տանել, վոր հատիկանոցի շուրջն ու մոտերքը վոչ աղբակույտ լինի, վոչ ել կեղտահոր, վորոնք կրծողների բուն են հանդիսանում:

Վորպեսզի մուկն ու առնետը պահեստ մտնելու ճանապարհ չունենան, թե հիմքը և թե պատերն այնպես պետք ե գնել, վոր ծակելու տեղ չլինի: Ավելի լավ կլինի ներքեի հատակը բետոնից անել, նուներն առուր պետք ե կպչեն կշտանոցներին, իսկ ներքեից ավելի լավ կլինի յերկաթ քաշել:

Թե այն շենքերում, վոր արդեն կառուցված են և թե այնտեղ, վորոնք հարմարեցվում են հատիկի համար, դռները, պատերն ու հատակն այնպես պետք ե

նորոգել, վոր ներս մտնելու համար կրծողների բոլոր ճանապարհները կտրվեն:

Բացի նախազգուշական միջոցներից, վոչնչացնող միջոցներ ել պետք ե ձեռք առնել այլ կերպ ասած՝ կրծողներին թունավորել:

Կրծողներին թունավորելու համար ամենից շատ ածխաթթու բարիոն և սպիտակ միշյակ են գործ ածում: Թե մեկը և թե մյուսը կարելի յե ձեռք բերել կոոպերացիայից, ինչպես և վասատուների դեմ կուպող բաժնետիրական ընկերությունից (ՈԲԿ):

Միշյակային թթու նասարի, ֆուֆոր և ստրիխին են գործածում, բայց մարդկանց և անասունների համար սրանք վասնգավոր են:

Թունը գործ են ածում գրավչանյութ պատրաստելու համար: Գրավչանյութը պատրաստված պետք ե լինի լավորակ մթերքներից, վորովհետեւ կրծողները վոչ մգլած հացի յեն մոտենում, վոչ ել փչացած մսի:

Ավելի լավ և գրավչանյութը գիշերը դնել վոր կրծողներն ազատ կարողանան ուտել: Միայն թե բոլոր նախազգուշական միջոցները պետք ե ձեռք առնել, վոր ընտանի կենդանիները գրավչանյութից չուտեն: Այս բանի առաջն առնելու համար, ավելի լավ և գրավչանյութերի վրա պառնկները ծալած յերկաթե բանիա կամ մի ուրիշ աման կործել և նույնիսկ այնպիսի հարմարեցված տախտակ զնել, վոր կրծողները կարողանան պատ ներս մտնել և գրավչանյութն ուտել:

Անմասիկ գրավչանյութ և քաշի միավորներ պատրաստելու միքանի զեղատում:

1. Յերկու բաժին հացի փափուկ միջուկ, մի բաժին արևածաղկի լուղ, մի բաժին շաքարավագ խառ-

նում են իրար և մի բաժին ածխաթթու բարիոն լըց-
նում վրան:

2. Հավասար չափով տավարի միս ու հայի փա-
փուկ միջուկ միասին համեմում են և հետը թույն
խառնում:

Այս գրավչանյութերն առնետների համար՝ են դոր-
ծադրվում: Միների համար գրավչանյութն այսպես
կարելի յե պատրաստել: Եթեկաթե ամանի մեջ մի կիլո
գարու, վարսակի կամ հաճարի հատիկ են լցնում ու
վրան սոսնձի շփոթ ավելացնում, վորից հետո 100
գրամ ել սպիտակ միջյակի փոշի յեն լցնում և ամրողվը
միառին լավ խառնում—3 ժամ այսպես թողնում են,
աղա չորացնում ու շաղ են տալիս բները: Վորպիսդի
թունավորված հատիկն առողջից ջոկնվի, ոխրա յեն
քսում: Կրծողների գեմ կրվելու գրավչանյութերը շատ
շատ են, վորոնց գեղառումները կարելի յե առնել կամ
հողմարմիններից, կամ վնասատուների գեմ կովող մտա-
նագետներից:

Բացի թունավոր գրավչանյութերից, առնետի ու
մկան տիֆի բացիներով վարակված գրավչանյութեր
ել են դործածվում:

Ավելի լավ և թարմ գրավչանյութ գործածել վո-
րովինեաւ թարմ ժամանակ ուժեղ կերպով և ներգոր-
ծում: Միաժամանակ հարկագոր ե, վոր կրծողի որգա-
նիզմի մեջ, վորքան կարելի յե, գրավչանյութ շատ
մտնի:

Գրավչանյութն ամրող շենքի մեջ միանգամից
այնպես պետք ե շաղ տալ, վոր այնտեղ մտնող բոլոր
կրծողներն ել ուտեն:

Բացիներով վարակված գրավչանյութերը թեև

մարդկանց համար այնքան ել վտանգաբեր չեն, բայց
ելի հենց, բաղադրության մեջ մտնող բացիները կուլ
տալիս, կարող են լուկ և աղիքների խանգարում առաջ
բերել: Ուրեմն՝ գրավչանյութերի վրա աշխատելիս
զգուշ պետք ե լինելու Այն ամանը, վորի մեջ զրավչա-
նյութ և պատրաստվել, ջրի մեջ պետք ե լիուացնել
կամ տաք ջրով լվանալ:

Կրծողների գեմ կովելու համար տեսակ տեսակ թա-
կարզներ են դործածում, վորոնք կարելի յե կամ տնա-
կան ձևով պատրաստել կամ ծախ առնել:

Պահեստի զանազան այլ վնասատուներն ել են հա-
տիկը սաստիկ փշացնում: Նրանցից ամենազլիսավոր-
ների շարքն են զասվում:

Պահեստի սուրմուռը: Մուգ-կինամոնագույն (դարչ-
նագույն) մի բգեղ ե, վոր ապրում և այն շենքերում,
վորտեղ հատիկ և պահպատ: Նա հատիկի մեջ և ձու
ածում, վորի համար հատիկի մեջը փորում և ձու ա-
ծելուց հետո լրձունքով կալցնում ե: 10—12 որից
հետո ձվից թրթուր և դուրս զալիս և կերակրվում և
հատիկի ալյուրն մասերով, Թրթուրը հենց հատիկի
մեջ ել դառնում և հարսնյակ, հարսնյակից ել՝ բղեղ-
թղեղը կատարելապես զարդանում և մոտավորապես 40-
որվա ընթացքում:

Բղեղն ամենից շատ վնասում և խոնավ և աաքացող
հատիկը: Զոր հատիկը քիչ և վնասում: Սուրմուռթն
առանց բան ուտելու կարող ե 40 որ ապրել և 12—14
որ ջրի տակ մնալ:

Պահեստի ժամանանը շատ մեծանալիս, հացին մի
տեսակ պղնձի հոտ և կալցնում: Հենց այս հոտից ել
կարելի յե իմանալ, վոր պահեստում շնամանձ կա:

Ծնաճանձն այսպիս ե բազմանում. Եղը ձռւ լի ա-
ջում հատիկի կեղեկ տակ կամ ուղղակի վրան։ Զգեց
դուրս յեկած թրթուրը, վոր հատիկի միջուկով ե կե-
րպարվում, 9—12 որ հետո դառնում ե հարսնյակ,
հարսնյակից ել՝ շնաճանձ Բարենպաստ պայմաննե-
րում շնաճանձի զարգացումը 14—17 որում ե ավարտ-
վում, բայց կարող ե 4 շաբաթ ել տևել:

Եեթի պայմանները բարենպաստ չեն, շնաճանձերի
վրա մի ուրիշ տեսակի հարսնյակներ են առաջ գալիս,
վորոնք կարող են անբարենպաստ պայմաններում իբ-
րակար ապրել. Պահեստում պահվող կտրտուկին շնաճանձն
եյական մեծ վնաս ե տալիս։

Հացի կամ նախիկի ցեցը շատ նման ե այն ցեցին,
վոր սենյակի մեջ թուշում և հագուստներն ու բրդե-
մբերը փշացնում են թիթեռնիկը դաշտում հասկերի կե-
ղեկի վրա յե ձռւ ածում, կամ թե պահեստում՝ հատիկի
վրա։ Զմերից թթուրներ են դուրս գալիս և ուտում
այն հատիկը, վորի միջից դուրս են յեկել. ուտելուց
հետո սողում են հարեւան հատիկների վրա։ Մի թըր-
թուրը 20—30 հատիկ կարող է փշացնել։ Հենց հատիկ-
ների կերած ու լորձաւնքով, կպցրած տեղերն ել դառնում
են թթուրների բուն։ Թթուրները միայն լերեսի
հատիկներն են վնասում, իսկ շեղջի մեջ չեն մտնում։

Պահեստի այս վնասատուների դեմ կովելու ամենա-
աժան ու մատչելի միջոցը շենքերն ու ամանները մա-
քուր պահելն ե։

Պահեստի թե հատակի և թե պատերի բոլոր ծակ-
ութուելը լավ պետք ե սվազվեն։ Փոշին, վոստայնն ու
այստեղ-ալյնտեղ հավաքված աղբը լավ պետք ե մաք-
րել։ Ավելի լավ կընի կտրտուկները քանդովի անել,

վոր տախտակները դուրս տանելը, լավ մաքրելն ու
ողափոխելը հեշտ լինի։

Ամռան չոր յեղանակին կամ ձմռան պարղկա որի-
բին ավելի լավ ե դռները, լուսամռւտներն ու ողանցք-
ները բաց անելով միջանցիկ քամիներ առաջացնել։

Մաքուր պետք ե պահել վոչ միայն շենքը, այլև
հատակի տակը, վոր հաճախ ամեն տհսակի վնասատու-
ների բուն ե դառնում։ Հատակի տակը պետք ե մաք-
րել և նավթի ու կրի լուծույթ քսել։ Վեց քառակուսի
մետրի համար վերցնում են 4 կիլոգրամ կիր և 800
գրամ նավթ։

Պահեստի հատակը կառւստիկի սողայի 10 տոկոսա-
լուծույթով լավ պետք ե լվանալ, իսկ պատերին ու
առաստաղին նավթի եմուլսիա սրսկել։ Եմուլսիան
այսպիս են պատրաստում։ Զհանգցրած կիրը ջրով քիչ
թրջում են, վոր թանձր զանգված ստացվի։ Ստացված
զանգվածի վրա նավթ են լցնում և շարունակ խառ-
նում։ Խառնուրդ պատրաստելու համար վերցնում են
3—3,5 կիլոգրամ կիր, 12 լիտր ջուր և 800 գրամ
նավթ։ Թե եմուլսիան և թե կառւստիկի սողան ավելի
լավ ե սրսկիչով սրսկել։

Աշխատելիս պետք ե զգուշ լինել, վոր ձեռքերին
ու յերեսին կիր ու սողա չդիպչեն, վորովհետև կաշճան-
են անում։ Աչքերին պահպանող ակնոցներ պետք ե
դնել։

Իսկ ամանները պետք ե մաքրել կոշտ խռպանակով
կամ թափ տալով։ Պարկերը պետք ե շուռ տալ և զըր-
սից ու ներսից լավ մաքրել։

Չոր հատիկն ավելի քիչ ե վնասվում։ Ուրեմն՝ ա-

վելի լավ կլինի պահեստ լցնելուց առաջ հատիկը լավ չորացնել:

Ալ բոլոր միջոցները հնարավորություն են տալիս հատիկը պաշտպանել փսասատուների հարձակումից և խանգարում են նրանց արագ զարգացումը: Բայց յեթե փսասատուները պատերի մեջ շատացել են, այս միջոցներով վոչնչացնելն այլևս հնարավոր չի, վնասատուներին կատարելապես վոչնչացնելու համար հատիկն ու շենքը թունավոր գաղերով են ախտահանում: Վնասատուննրի դեմ կովելու լավագույն միջոցներից մեկը շենքը ծծմբածխածնով ախտահանելն ե:

Միայն պետք ե աչքի տուաջ ունենալ, վոր ծծմբածխածինը շատ թունավոր ե: Նրա գոլորշիներն իսկույն տարածվում են ողի մեջ և կրակից պայթուն են առաջ բերում: Ուրեմն՝ ծծմբածխածին բանեցնելիս բոլորովին չպետք ե թույլ տալ, վոր մոտը ճրագ, գլանակ և այլ բաներ լինեն:

Այն շենքը, վոր ուզում են ախտահանել, բոլոր անցերը պինդ փակում են և ծակուծուկը սվաղում:

Լավ չպատրաստած փայտե պահեստներին ծծմբածխածնի ծուխ տալն ոգուտ չունի, վորովհետեւ հնարավոր չի լինում բոլոր ժակուծուկն ինչպես կարգն և փակել, և դրսից յեկող ողը չի թողնի, վոր փսասատուները վոչնչանան: Քամի լեղանակին նռւյնիսկ լավ սվաղած պահեստների մեջ ե փշում: Ծուխ տալու համար ավելի լավ ե այնպիսի ժամանակ ընտրել, վոր քամի չլինի: Հողե կամ ապակե ամանների մեջ լցրած ծծմբածխածինը պահեստում բարձր տեղ են դնում—դարակների, պարկերի կամ կտրտուկների մեջ լեղած հատիկի վրա:

Լցնելն ու դնելը մեկ պետք ե լինի, վորից հետո պետք ե ծածկվի վերջին գուռն ու նույնիսկ բանալու անցքը լավ սվաղվի: Ծծմբածխածնի գոլորշին ողից ծանր ե, վորի պատճառով ել ցած ե իջնում: Դատարկ պահեստի համար միջին հաշվով վերցնում են 50—80 դրամ ծծմբածխածին, իսկ լիքը պահեստի համար՝ 1 խորանարդ մետրին 150—250 գրամ: Միջատներին կոտորելու համար 10 ժամ գոլորշիացնելը բավական ե: Ցեղե ամբողջ շենքն ե ախտահանվում, ավելի լավ ե 24—48 ժամ պահել:

Ախտահանելուց հետո շենքն զգուշությամբ պետք ե բաց անել, վոր չթունավորի:

Շենքը բաց անելուց հետո միջանցիկ քամիների միջոցով 3—6 ժամ պետք ե ողափոխել: Հատիկն ու շենքն ախտահանելու համար ծծմբազաղ ել են գործածում, բայց սրա գոլորշին ծլունակության վրա վատ ե ազդում: Խլորապիկրինն ել ծլունակության վրա վատ ե ազդում, վորի պատճառով ել այն գործ են ածում շենքն ախտահանելու համար, յերբ այնտեղ հատիկ չկա: Խլորապիկրինի գոլորշին խիստ թունավոր ե և ողից ծանր, վորի պատճառով ամենից առաջ շենքն ամենացածը առարկաների վրա և հետո վեր բարձրանում: Խլորապիկրինի գոլորշին վոչ այրվում ե, վոչ ել պալթում, վորով ավելի լավ ե տարբերվում ծծմբածխածնի գոլորշուց:

Շենքն ու հատիկը ախտահանելու աշխատանքը հմտություն ե պահանջում: Գյուղական մենատնտեսությունների մեջ ախտահանումը միանգամայն անողագործելի չե: Ախտահանումը մատչելի յե միայն սոցիալիստական սեկտորի և այն չքավորամիջակային տնտեսություններին, վորոնք իրենց հատիկը կոլեկտիվ կամ հանրակին պահեստում են պահում:

վելի լավ կլինի պահեստ լցնելուց առաջ հատիկը լավ չորացնել:

Այս բոլոր միջոցները հնարավորություն են տալիս հատիկը պաշտպանել վասատուների հարձակումից և խանդարում են նրանց արագ զարգացումը: Բայց յեթե վասատուները պատերի մեջ շատացել են, այս միջոցներով վոչնչացնելն այլևս հնարավոր չի վճառատուներին կատարելապես վոչնչացնելու համար հատիկն ու շենքը թունավոր գաղերով են ախտահանում: Վնասատուննրի դեմ կովելու լավագույն միջոցներից մեկը շենքը ծծմբածխածնով ախտահանելն է:

Միայն պետք ե աչքի առաջ ունենալ, վոր ծծմբածխածինը շատ թունավոր ե: Նրա գոլորշիներն իսկուն տարածվում են ողի մեջ և կրակից պայթուն են առաջ բերում: Ուրեմն՝ ծծմբածխածին բանեցնելիս բոլորպին չպետք ե թուլլ տալ, վոր մոտը ճրագ, գլանակ և այլ բաներ լինեն:

Այն շենքը, վոր ուզում են ախտահանել, բոլոր անցքերը պինդ փակում են և ծակուծուկը սվաղում: Լավ չպատրաստած փայտե պահեստներին ծծմբածխածնի ծուխ առաջ ոգուտ չունի, վորովհետև հնարավոր չի լինում բոլոր ծակուծուկն ինչպես կարգն և փակել, և դրսից յեկող ողը չի թողնի, վոր վասատուները վոչնչանան: Քամի լեղանակին նույնիսկ լավ սվաղած պահեստների մեջ և փշում: Ծուխ տալու համար ավելի լավ և այնպիսի ժամանակ ընտրել, վոր քամի չինի: Հողե կամ ապակե ամանների մեջ լցրած ծծմբածխածինը պահեստում բարձր տեղ են դնում—դարակների, պարկերի կամ կտրտուկների մեջ լեղած հատիկի վրա:

Եցնելն ու դնելը մեկ պետք ե լինի, վորից հետո պետք ե ծածկվի, վերջին դուռն ու նույնիսկ բանալու անցքը լավ սվաղվի: Ծծմբածխածնի գոլորշին ողից ծանր է, վորի պատճառով ել ցած և իջնում: Դատարկ պահեստի համար միջին հաշվով վերցնում են 50—80 զրամ ծծմբածխածին, իսկ լիքը պահեստի համար՝ 1 խորանարդ մետրին 150—250 զրամ: Միջատներին կոտորեն համար 10 ժամ գոլորշիացնելը բավական է: Ցենքը ամբողջ շենքն և ախտահանվում, ավելի լավ և 24—48 ժամ գահել: Ախտահանելուց հետո շենքն զգուշությամբ պետք ե բաց անել, վոր չթունավորի:

Շենքը բաց անելուց հետո միջանցիկ քամիների միջոցով 3—6 ժամ պետք ե ողափոխել: Հատիկն ու շենքն ախտահանելու համար ծծմբազազ ել են գործածում, բայց սրա գոլորշին ծլունակության վրա վատ և աղղում: Խլորապիկրինն ել ծլունակութլան վրա վատ և աղղում, վորի պատճառով ել այն գործ են ածում շենքն ախտահանելու համար, յերբ այնտեղ հատիկ չկա: Խլորապիկրինի գոլորշին խիստ թունավոր ե և ողից ծանր, վորի պատճառով ամենից առաջ նստում և ամենացածը առարկաների վրա և հետո վեր բարձրանում: Խլորապիկրինի գոլորշին վոչ այրվում ե, վոչ ել պալթում, վորով ավելի լավ և տարբերվում ծծմբածխածնի գոլորշուց:

Շենքն ու հատիկը ախտահանելու աշխատանքը հմտություն և պահանջում: Գլուղական մենատնտեսությունների մեջ ախտահանումը միանդամայն անողտագործելի յե: Ախտահանումը մատչելի յե միայն սոցիալիստական սեկտորի և այն չքավորամիջակային առնեսություններին, վորոնք իրենց հատիկը կուեկտիվ կամ հանրային պահեստներում են պահում:

Այս աշխատանքը սովորաբար կատարում են մաս-
նագետները, կամ, սրանց ղեկավարությամբ՝ մի ուրիշը-
իսկ զյուղական մասն, բաժան-բաժան տնտեսություն-
ներին մասսատուների դեմ կռվելը բոլորպին անմատ-
չելի յե վոչ միայն այն պատճառով, վոր փեթականմասն-
փոքրիկ շտեմարաններն այնպես հարմարեցված չեն,
վոր կարելի լինի այնտեղ պայքար կազմակերպել:
Մանր տնտեսությունը յեթե նույնիսկ փորձ ել անի-
պայքար մղելու, դարձյալ անողուտ կլինի, վորովհետև
հարեան շենքի մասսատուները պահեստը շատ շուտով
կլցնեն:

Այսպիսով՝ այստեղ ել այն համոզմունքին ենք գա-
լիս, վոր գյուղական չքավորա-միջակային տնտեսու-
թյունը բարելավելու միակ միջոցը կոլտնտեսություն-
ների մեջ միանալն ե:

Միայն սոցիալիստական տնտեսությունը կարող ե-
նատիկը լավ ու կանոնավոր չորացնել, պահելու հա-
մար միանգամայն հարմար պահեստ կամ շտեմարան-
շինել, կանոնավոր խնամքի գործը գլուխ ըերել ու
հատիկի մասսատուների դեմ կռվել և, այսպիսով՝ հա-
տիկի կորուստը նվազագույնի հասցնել:



Թարգմ. ԳԱՐ. ՀԱԿՈԲՅԱՆ
Խմբ. Ս. ՅԵՐԿԱՆՅԱՆ

Սրբազրեց Դար. Հակոբյան

Տիրած 2000, Հրատ. № 2505, Փորմատ $6^{1/2} \times 10^{1/2}$

Թեուրատի տպարան. Գլամիլիտ № 8078 (թ) Գատվեր № 559-

ՀՀ Ազգային գրադարան



NL0282446

18688

ԳԻՒՐ. 35 Կ.

ԱՐԴ
ՏՎԱ



Сушка зерна и подготовка зернохранилищ

Госиздат ССР. Армении
Эревань 1933